



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԽԱՐԱԶԱԳԱՐԱՆ

ՆՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԻԻ 48

9/22 ՅՈՒՆԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ






ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի † Յունիս 9/22 † Թիւ 48

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏ

ՄԱՐԶԻՄԱՆ

Այսօր Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցին հանդիսութեամբ կը տօնէ իր փառապանծ Հիմնադիրն, զՍուրբն Գրիգոր Լուսաւորիչ: Ամէն Եկեղեցի ունեցած է իր պաշտպան Սուրբը, և ոմանք իրենց հիմնադիրն ալ, ինչպէս Իրլանտացիք՝ զՍուրբ Պատրիկիոս, Անգլիացիք՝ զՍուրբ Աւգոստինոս, Գերմանիա՝ զՍուրբ Բոնիփակիոս, եւ չնայ Իրաւ է՝ Սուրբերը իբրեւ այն, լսողարձակ տարբերութիւն մը չունին իրարու մէջ, և այդ ազգերը, համանգամայն, մեծ խանդավառութեամբ կը վերաբերին միշտ իրենց պաշտպաններուն հանդէպ. սակայն, թէ՛ մեծին Գրիգորի մերոյ Սրբութեան պարագաները և թէ՛ մեր ազգին ցանկ ունեցած կացութիւնը և անոր դէպ առ նա վերաբերումը ի նկատի առնելով, եզական և անդուգական կը մնայ անշուշտ՝ պարթեւազն աղաներաբառ հոգեշունչ մեր Լուսաւորիչը, որ իրեն գովաբան ունեցաւ ընդհանուր Եկեղեցւոյ

ընկալ աղօթքը, և ճշմարիտ Հօր մը այս գութն ու գորով, վերածնոյց
զՀայաստան աշխարհը որուն ԱՌԱՔԵԱԼԸ եղաւ նա: Վրդովեցաւ,
դրդեցաւ Հայաստան աշխարհ, խաղաղութեան և Յիսուսի սիրոյն Աւե-
տարանին փեղեցիկ ոտքերու տրոփումին: Անոր երկնակոչ ձայնին քու-
նասթափ զարթեալ Հայաստան աշխարհ իր դարուեր խաւարամած նիւ-
հէն. պայծառափայլ խաչին ի տես, երկնագրեցիկ սարսուռ մ'անցաւ
ծաղկազարդ Հայաստանի վրայէն. լոյսը, շողարձակ և հեզեղօրէն, ծա-
փեցաւ արշալոյսի փթթումով, ակնախտիդ, ոսկետեղաց, և Հայաս-
տան բացաւ աչքերը ի լոյս ի տես խաչին: Յաղթեց Միածինը,
Երեւցաւ խաչը, և փչրեցաւ կուռքը. կանգնեցաւ Ս. Տաճարը և Ս.
Սեղանը, և կործանեցաւ մեհեանն ու բազինը. պճնեցաւ քանանայն, և
ի կոր կործանեցաւ և անյայտացաւ սատանայն: Եւ հալածող ու չարչա-
րող ինքնակալը՝ ինկաւ փարեցաւ հալածելոյն և բազմաչարչար նահապա-
կին ոտքերուն. և փոխանակ իր թափած Գրիգորի արեան, հայցեց ըն-
դունեցաւ կենարար Ջրոյ կայլակները, որով որդեգրեցաւ Հօրն Երկնա-
ւորի. և փոխանակ իր բզկտած յօշոտած Գրիգորի մարմնոյն, հայցեց ըն-
դունեցաւ հրէշտակաց Հայր, Աստուածորդւոյն փրկարար և քաւիչ Մար-
մինը որով կաղզուրուեցաւ ի կեանս անմահ. և փոխանակ Գրիգորի ան-
ստան յաղթութեան և զաւանթութեան, հայցեց ընդունեցաւ զՀոգի զօ-
րութեան, անդ և յաւիտենական, որով կնքեցաւ դրոշմեցաւ և կազ-
մեցաւ սպառազէն պատրաստեցաւ ի ճակատամարտ սուրբ, անաւոր ընդ-
դէմ այսոյն չարութեան: Եւ Հայաստան աշխարհ լսեց այս ձայնը, այս
վարդապետութիւնը, հոգեւոյս, երկնաւոր, երանական. և կործանեցան
մեհեաններ, անհեաացան քուրմեր, աներեւութացան աւելորդապաշտ
ստութիւններ, և կրկին ծաղկեցաւ բուրումնաւէտ Հայաստան աշխարհ,
և Հայաստանի զեփուռները, ալեակները, թռչնիկները, ծաղիկները իրա-
րու փոփսային Յիսուսի սուրբ Անունը, և Կոյս-Մօր անարատ Անունը.
Հայաստանի մթնոլորտը անոնց բալասանովը լեցուեցաւ պստարուն: Եւ
քրիստոնեայ եղաւ Հայաստան աշխարհ:

Պատմութեան մէջ միակ է այս դէպքը: Հզօր ու երիտասարդ թա-
գաւոր մը դարձի եկաւ հրաշալի հաւատքի հոտատութեամբ: Հզօր և
ընդարձակ թագաւորութիւն մը, մէկ մարդու ձեռքով, միահաղոյն և
կառարեւոյթաւ, տեւականօրէն և խորապէս քրիստոնէացաւ: Այդ դէպ-
քը պատմութեան հրաշալիքն է: Միլիոնաւոր, հզօր և կորովի, ինքնա-
գիտակից և խորիստ ժողովուրդ մը, Քսենոփոններու, Կիկերոններու,
Տակիտոսներու սքանչացումը արթնցուցած, Պարթևաց, Սասանեան-
ներու, Հռովմէական լէգէոններու քաջարար զիտադրած, Մեծին Տիգ-
րանի որով լայնածաւալ Կայսրութիւն մը կանգնած, մեծամեծ ինքնա-
կալներ յառաջ բերած զարհուրելի նկարագրի տէր և հանճարաւոր ազ-
գութիւն մը, իր աւանդութեանց, առաքինութեանց, մուլութեանց ու

մոլորութեանց կատաղօրէն փարած անդիմադրելի ժողովուրդ մը . միահամուռ անձնատուր եղաւ տկար մարդու մը կողին . ստաթուր կոխեց փշրեց իր կամքը և իր սուտ աստուածները , նուաճեց իր միտքը ճշմարիտ Աստուծոյ յայտնած ճշմարիտ կրօնքին , վայրկեանապէս և անբաժանելի յաւէտ . և դարերու մէջ պահպանեց զայն , իր արեան ու կեանքի գնով : Անքնին է շնորհաց գործը . մարդկային մտաց ա՛գննելի է Հոգւոյ Սրբոյ ազգեցիկ զօրութիւնը , Բայց և այնպէս հիանալի պէտք է նկատենք նաեւ Ս . Գրիգորի բարեկարգիչ և ստեղծիչ հանճարը , քաղաքապէտ իմացողութեան ընդարձակութիւնը , առանց Ռիչլըիէօյի մը դիւրաթեքութեան , առանց Մաքիավէլիի մը կամ Պրզմարքի մը բռնակալ և տիրանենգ դաւերուն , նա գիտցաւ , տասը , քսան անգամ միլիոնաւոր և ահեղ ազգութիւն մը ի դարձ բերել միանգամայն , առանց խլրտու մի և ապստամբութեան , առանց կռւոյ կամ պատերազմի և արիւնհեղութեան . գիտցաւ փշրել՝ կռուքերը , կամքերը , միտքերը , սովորութիւնները , դիւրաւ , շուտ և հաստատուն ու տեւական եղանակաւ , գիտցաւ սիրցնել իր բերած կրօնքը , խաչը և գինքն ալ . մինչեւ իսկ պաշտելի ընել . գիտցաւ այն սուրբ սկզբունքները այնքան խորարմատ հաստատել , որ դարերու շարքերը , բարբարոս բարքերը , ազգաց և ազանց հրոսակները , արշաւանքները , թալանները , խողխողումները , կոծոպող անճխող գաղթեցումները և գաղթումները , անաւէր պառակտումները , և ի սփռեալ սալխարհի վայրաւատին ցրումները , և միանձան մարդախոշոշ բռնակալներու դժոխային մեքենայութիւնները չկրցան երբեք նուազեցնել անոր ծոցէն Քրիստոսի Ս . Կրօնքին զգացումն ու սէրը : Ահա անմեկնելի դէպք մը , որ եթէ իբրեւ հրաշք չընդունուի , այլ լսկ իբր բնական դէպք մը , այդ աւելի մեծ հրաշք է :

Վերջապէս , հակիրճ ըլլալու համար , յիշենք այս մեծ մարդուն և մեծ Սուրբին ուրիշ փառաւոր մէկ տիտղոսն ալ , որ գերազանցապէս զարմանալի է : Կատարեալ ազգ մը դարձի բերաւ , կարգի դրաւ , և երբ վստահ եղաւ սր իր գործը կրնայ նկատուիլ աւելի քան սուարտած , խոտեց արհամարհեց մարդկային փառքն իր ամէն ձեւին ներքեւ . ուրացաւ զճախարհ , ուրացաւ ինքզինքը , քաշուեցաւ Քրիստոսի հետ . . . ի յեառն , առանձնացաւ , անձանօթ վայրենի սարերու վրայ , անմարդակոխ անձաւներու մէջ . ԾԳՆԱՒՈՐ եղաւ . Ու մարդիկներէ թագչելով , և կարելի է , — ժամանակի՛ խնդիր , — անոնցմէ մոռցուած , միայն հրեշտակներու և սերովբէներու ընկերակցութեամբ , ի միութեան և ի խաղաղութեան Քրիստոսի , և ննջելով Անոր Ս . Սրտին վրայ որ յոյս է ամենեցուն :

Պատմութիւնն ու մարդկութիւնը ապշահար կը մնայ այսքան եզական ու չքնաղ առաքինութեան , այսպիսի աննման կատարելութեան , սոյնօրինակ գերբնական ու սերովբէանման կենցաղի առջեւ : Պատմութեան համար անմեկնելի է մեր Ս . Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետը :
(Շարունակելի)

Ս. ԲԱԶԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՆԱՄԱԿԻՆ ԲՆԱԳԻՐԸ

VENERABILI FRATRI
PAULO PETRO XIII PATRIARCHAE CILICIAE
ARMENIORUM,
PIUS PAPA X

Venerabilis Frater

Salutem et Apostolicam Benedictionem.

Muneris Nostri auctoritatem, in re sane permolesta, sibi in praesens exposcit Armeniorum Ecclesia. Allatum siquidem est. idque aegre admodum tulimus, nonnullos ex ea gente, catholicae professionis prorsus immemores, eo temeritatis et contumaciae in Apostolicam hanc Sedem tuamque spiritualem potestatem devenisse, ut te pastorem suum probris contumeliisque afficere, ab exercendo sacro munere prohibere, e sede deturbare honoris tui sint ausi. Non eos ab injuria continuit pietas; non officii conscientia deterruit; non legitimae auctoritatis hortationes, non gravia monita, non intentatae poenae prohibuere. Quin etiam vel discidium inire placuit a Romana Ecclesia, *administrativo* uti vocant *consilio*, sine ullo prorsus ecclesiasticae auctoritatis inter-ventu, constituto: illud quoque non dubie ostendentes, velle nimirum Patriarchalis Sedis sibi relictus arrogare. — Profecto quo impensius Armenios diligimus, eo dolemus acerbius indigne facta, suscepta nefarie consilia. Et quamquam severitatem in eos adhibere piget quos pater-terna caritas filiorum loco jubet habere, ad id tamen vel inviti com-pellimur, cum Nostrum sit maxime advigilare ut Episcoporum aucto-ritati suus ubique sit honos: ut Ecclesiae jura inviolata consistant: ut hujus unitas ne quid unquam capiat detrimenti. Quare omnia quae hac turbulenta tempestate contra Apostolica mandata, sacrorumque cano-num sanctiones gesta patratave in Armania sunt vehementer repro-bantes, nullum atque irritum esse edicimus quidquid contra Ecclesiae jura ibidem statutum est: *administrativum consilium*, quod supra no-minavimus, illegitimum omnino ac schismaticum esse denuntiamus; ejus membra ceterosque omnes adversus ecclesiasticam auctoritatem rebelles in excommunicationis poenam incidisse solemniter declaramus. — Ad ceteros quod attinet Armeniae catholicos, eos oramus et obsecramus in Domino ut, *ne excident a propria firmitate errore traducti:* erranti-

bus vero fratribus salutarem poenitentiam, maturum ad sanitatem reditum, consociata Nobiscum prece, impetrare a Deo contendant. — Te denique, Venerabilis Frater, cujus adeo dolemus vicem ut, quae te premunt curae curas gravissimas augeant, quibus Ipsi undique premimur, ad fortiter patiendum, ad ignoscendum in caritate, ad Deum exorandum verba et exempla erigant Apostoli scribentis: *“Maledicimur et benedicimus; persecutionem patimur et sustinemus; blasphemamur et obsecramus”*; spes erigat mercedis, quae eos manet qui, «Cum Christo permanserunt in omnibus tentationibus ejus». — Coelestium auspicem munerum Nostraeque testem benevolentiae, tibi, Venerabilis frater, universo tuo Clero ac populo Apostolicam Benedictionem peramanter in Domino impertimus.

Datum Romae apud S. Petrum die 1 Junii MCMXII, Pontificatus Nostri anno nono.

PIUS PAPA X.

ՕՆՈՒՆՃԸ ՊԻՈՍ ԲԱԲԱ

ՄԻԻԶԹԵՐԷՍ ՊԻՐԱՏԵՐԻ

ԿԻԼԻԿԻԱ ԷՐՄԵՆԻ ԳԱԹՕԼԻՔ ՊԱՏՐԻԱՐԺԸ

ՕՆ ԻԻԶԻԻՆՃԻ ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍԱ

mm+mm

Սէլամ վէ քէպէրրիւնաթը ռէսուլանէ

Պու կիւն էրմէնի Դաթօլիք Քիլիսաթը հաղիգաթէն զայէթ մուէս-սիֆի պիր մէսէլէտէ Պիգիմ հիւքիւմէթի ըստնայէմիլին իսթիմալինէ լիւղում կէօսթէրիյոր :

Յիլ հաղիգա , իէէսսիւֆի ազիմ իլէ մալիւմիւմիւզ օլմըշալը քի , պու միլլէթտէն պաղլլարը : Դաթօլիք օլտուգլարընը քեամիլէն ունուտարազ , պու ըէսուլանէ Քիւրսիյէ վէ սիլին ըստնայէթ ինիդէ գարչը օ տէրէճէ քիւսթաիլլըզ վէ իէաննիւտէ վասըլ օլմըշալլար քի , քէնտիլէրին Զօպանը պուլընտըղընը հալտէ , սիլի թահգիր իթմէք , իէրզիլ իթմէք , մուգաստէս վագիֆէնիլին իճրասընա միւմանէտի իլլէմէք վէ սիլի ըէսսի իգամէթ կեանընըտան գօվմազ կիպի ահվալը նալայըզէ ճիւրէթ իթմիլաիլլըր : Հաղարէթմաիզ պու մուամէլլէրինտէն քէնտիլլըրին հիլ պիր չէյ կէրի աուրաբրամաւըշաթը , նէ ալինաարլլըզ , նէ՛ վաղիֆէ հիսսիյաթը , նէ՛ խաթէյի մէշրուանլին նասիհաթլարը , նէ՛ չէտիտ իսթաթաթ վէ նէ՛ տէ ճէգա թէհաթի հիլ պիր սէմէրէ կէօսթէրէմէմիլաիլլը : Յէնաթը

չուրասը տրբի, իտարէի լուհանիյէնին էն ճիւղի պիր միւտախէլէսի պիլէ օլմագսըզըն՝ Վարչական Ժողովը նամը ալթընտա պիր մէճլիս թէշ-քիլ իտէրէք վէ Պատրիարքութիւն Բիւրսիսինին իրատարընը զապթ իթմէք եօլունտաքի ֆիքրլէրինի աչքատան աչրլա պէյան էյլէհէրէք՝ Բօմա Բիլիսսաընտան այրլմալարընա պիր մուգատտէմէ աչմագտան սա չէքինմէմիշ տիրլէր :

Հազիգաթը հալատէ, էրմէնի Գաթօլիքլէրինէ օլտն մուհապպէթիմի-զին պէօյիւքլիյիւ նիսպէթինտէ պու աճվալը նալայըզէ վէ էֆքեարը մէն-ֆուրէյէ թէէսսիւֆլէր իտէրիլ, վէ պիր բէտէրանէ մուհապպէթին էվլա-տըմըղ նազարընտա կէօրմէքլիյիմիլի իյճապ իթտիրտիլի քիմսէլէրէ գարչը շիտտէթէ միւրաճաթա մէճպուր պուլունմագլըմըղ պիզիմ իչուն զա-յէթ նախօշտըր, Փագաթ պիզիմ պաշլըճա վազիֆէմիլ, Բիսգօպոսան սա-լահիյէթինէ հէր թարաֆտա բիայէթ օլընմասընա, Բիլիսսա հուգուգունա վէ օնըն պիրլիյինէ էն ճիւղի պիր սուրէթտէ պիլէ խալէլ կէթիլիմէմէ-սինէ նէզարէթ իթմէք պուլունտըզընտան՝ պիլա իիթիյար պու թարիզի թուրմայա մէճպուր օլուեօրըզ : Պինաէն ալէյ, պու իսեան էսնասընտա էրմէնի Գաթօլիք ճէմաթը միեանընտա Բիւրսիյի Բէսուլանէնին էվա-միրինէ վէ գալմանիյի մուգատտէսէ մուգարրէրաթընա գարչը վագը օլտն պիլ ճիւմէլ աճվալ ու հարաքեաթը քէմալը շիտտէթլէ մահքիւմ իտէր, վէ Բիլիսսան հուգուգընա մուխալիֆ հէր նէ քի եարլմըլ իսէ, քեաֆ-ֆէսինինտէ քէէնլէմ հէքիւն վէ հիւքիւմսիւզ օլտըզընը պէյան իյլէրիլ : Պալէատէ մէզքիւր Վարչական Ժողովը քիւլլիէն նա մէչրու վէ հերձուա-ծողական իլան իտէր վէ մէզքիւր ազատընտան հէր պիրինին վէ իտարէի լուհանիյէյէ գարչը իսեան իթմիշ պուլլնան քեաֆֆէյի էրմէնի Գաթօ-լիքլէրինին բէսմէն աֆօրօզլանմըլ (Բանադրեալ) օլտուգլարընը ալէնէն պէյան էյլէրիլ :

Տիլէր էրմէնի Գաթօլիքլէրինէ կէլինճէ, պունլարա՝ քէնտի քէն-տիլէրէ զայէթ տրգաթ իյլէմէլէրի վէ իզֆալ օլունարագ սէպաթլարընա խալէլ կէթիլմէմէլէրի իչուն (Մի՛ անառակ մուրուլթեամբն զգածիւլք ան-կանիցին յաստեացն հաստատութեանն : Բ. Պետրոս Գ. 17) վէ այնի վա-զըթտա տուալարընը պիզիմ տուալարըմըղա պիրլէշտիրէրէք զէլալէթէ տիւշմիւշ օլտն գարաաշլարընըն խէլասքեար պիր թէօվպէյէ մալիք օլմա-լարընը վէ պիր ան էվվէլ էֆքեարը սալիմէյէ բիւճու էյլէմէլէրինի ճէ-նապը հազգտան տիլէմէլէրի իչուն, Յիսուս Բրիստոստա բիճա վէ թէ-զարրու իտէրիլ :


Սիլին տէ, էյ միւհիթէրէմ Պիրատէր, տիւշար օլտուզընըղ չու հալ-լէր, հէր թարաֆտան զաթէն մարուզ պուլունտըզըմըղ քէտէրլէրիմիլի ֆէվզ էլ հատտ թէզքիտ իթմէքալտիրլէր, մա մաֆիշ մէրտանէլէքմէյէ, մուհապպէթլէ աֆվ իթմէյէ, «Պիզի ֆասլ իյլէյէնլէրէ իտայր տուա օգուր-բուք, թէատտի իտէրլէրտի, գապուլ իտէրտիք, քիւֆր իյլէրլէրտի, բիճա

իյլէրաիք» (Բամբասէին զմեզ՝ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք, հայոյէին՝ աղաչէաք, Ա. Կորն. Դ. 12) քեւամլորնր կաղան Առաքեալն քեւամլորյա վէ էմսալլա ճէնապր հազգա տուա իթմէյէ ճէտա-րէթլէնինիզ, Թէճրիպէլէր արասրնատ Յիսուս Քրիստոսա պէրապէր զու-լանլարա ինթիզար իյլէյէն միւքեաֆաթրն իւմիտի սիզի թէչճի իթսին:

Պէրէքեաթը ալմազիյէյէ պիր տէլիլ վէ խայրխաշրղորդա պիր հի-չանէ օլմագ իւզրէ, Բապատա մուհապէթ իլէ, Սիյէ. էյ միւթէրէմ Պիրատէր, պիլճիւմլէ բուհպանըզա վէ քեաֆիէի ճէմաթլընըզա լէ-սուլանէ թէպէրրիւքեաթմըզը իթա իտէրիզ:

Բօմատա, Ս, Պետրոս զուրպինտէ, Բարալղըմըզըն սօզուզընճը սէնէսի 1912 Յունիսին պիրինճի կիւնիւնտէ կաթըլմըշ սիր:

ՕՆՈՒՆՃԷ ՊԻՐՍ ԲԱԲԱ



ԳԵՐԵԶՍԱՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Բայց և այնպէս այժմ մի՛ օրէնք նոր՝ չիրիններն
Գորովալի նայուածքէ դուրս ձրգէ՝ և անուն
Կ'արգիլէ առ ժեռածներուն, առանց չիրմի
Եւ կը հանգչի քու Բանանայդ ով՞ Թալի'ա
Որ երգելով իրեն՝ յարկին տակ աղքատիկ
Քեզ ծաղկեցուց դափնի մ'երկայն գորովներով,
Եւ քեզ պսակներ կախէր, և դուն զարդարէիր
Ժպտովդ երգերն՝ որք խայթէին Լոմպարտացի
Սարտանարտոյն, որուն է քաղցր միայն կովերու
Բառաջն. որոնք՝ Ապտուանեայ քարայրներէն
Եւ Թիչինէն զայն երջանիկ կ'ընեն խորտկով
'Ի անհոգութեամբ: Ո՛վ գեղեցիկ Մուսայ ո՛ւր ես
Սմայրոզեային չեմ բզգար չունչն որ է նըչան
Աստուածութեանդ — այս անկող մէջ ուր կը նըստիմ
Եւ կը քուքամ մայրենի յերդս: Եւ դուն գայիր
Եւ խնդայիր անոր՝ ներքեւ այս թըմբին
Որ արդ անկախ սաղարթներով մըրմընջէ յար,
Զի չը ծածկեր, ո՛վ Դիցուհի Սափորն ծերին
Որուն արդէն հանդիստ և չուք յօժար կ'ուտար:
Դուցէ դուն՝ մէջ՝ աամիկ թումբի աստանդելով

* Տե՛ս թիւ 44, էջ 246:

Փննաւոս թէ ուր հանգչի Սուրբ զլուին Փարինիդ,
 Անոր ոչ մի ըստուեր դրաւ իր սրմերում
 8 Քաղաքն, լրկաի հրապուրիչ միայն ներքինի
 Գուսաններու, ոչ քար, ոչ բառ, և ոսկորներն
 Գուցէ անոր, հարեալ գլխով կ'արիւնէ գողն
 Որ յանցանքներն ձրգեց վրայ կախազանի:
 Բեկորներու կոճղերու մէջ լրակա ճանկերն
 Լքուած քածին, փոսերու վրայ թափառելով
 Եւ սովալլուկ ոռնրլտալով, և յսպոպին
 Գանկէն ելլելն, ուր կը թաքէր լուսնի լոյսէն,
 Թեւապարելն խաչերու վրայ որք ցիրուցան
 Դաշտերու մէջ կը տարածուին դամբանական,
 Ի անմաքուրին ամբաստանելն ոգոյ հեծեծով
 Ժառագայթներն՝ որոնցմով գութ տեղան աստղեր
 Լքուած մուցուած չիրմաց վրայ: Ո՛վ Դիցուհի
 Ի զուր շաղեր տոգոյն գիշերէն Պըւէտիդ վրայ
 Խընդրես, աւաղ շիջածներու վրայ ծաղիկ
 Զրբուսնիր, թէ անոնք չլլան՝ ե՛ւ մարդկային
 Գովասանելով ե՛ւ արտօսելով գլթոտ պատուած:
 9 Այն օրէն որ հարսանիքներն, դատարաններն
 Եւ բագիններն, մարդ—գազանաց սորվեցուցին
 Ըլլալ գլթոտ ուրիշներու և իրենց հետ,
 Մարդերը ողջ կը խլլէին չար եթէրէն
 Ի երէններէն՝ ողորմ մնացորդն զոր քննութիւնն
 Յաւէթ շարժով սահմանէ այլ զգայարանաց:
 Անցեալ փառաց վկայութիւն էին դամբանք,
 Եւ բագիններն՝ զաւակներուն, ուրկէ պատգամք
 Դային առտ՝ ին թերափներուն, ահ ու սարսափ
 Կ'ազդէր երգումն նախնիքներու աճիւնին վրայ:
 Կըրծնք, գոր այլ և այլ ծէսով՝ թէ՛ հայրէնի
 Լաւութիւննիր, թէ՛ զօդ սիրոյ ազգակցութեան
 Մըշտացոյցին երկայն չարքով տարիներու:
 Ո՛չ միշտ՝ քարերը դամբանաց սալայատակ
 Տաճարներու եզան, և ոչ դիակներու
 Նեխը փարուած խունկին՝ պըղծեց պաղատողներն:
 10 Ոչ քաղաքներն պատկերացած կըմախքներէն
 Տըխրեցան, մարք նինջերու մէջ սարսափահար
 Ի վեր կ'ոսանուն, և կ'երկարեն մերկ բազուկներն՝
 Իրենց դիւցիկ մանկան սիրուած գլխուն վրայ,
 Զի չարթընցնէ երկայն հեծեծն մնում անձին

Որ թախանձէ Սըրբավայրէն՝ ժառանգներու
Վարձկան աղօթքն : Այլ նոճիներ և մայրիներ
Գըգուած մաքուր հոսանքներէն զեփուներու
Յաւերժ դալար ցօլէին վրայ Սափորներու
Յիշատակի համար յաւէժ , թանգ անօթներ
Կը ժողուէին արտասունքներն նուիրական :
Բարեկամներն կը կորզէին կայծ մ'արեւէն
Լոյս սրբուելու մութ գիշերին ըստորերկրեայ .
11 Բանգի մեռած ատեն մարդուն աչերն փրնտեն
Լոյս արեգակն , 'ւ ամէն լանջիւր յետին հառաչն
Ո՛հ , կ'առաքեն փախչող լոյսին : Շատրրուաններն
Քառութեան ջուր կը սրսկէին , ե՛ւ թաւընջակ
Ե՛ւ մանիշակ մըշակէին սըգազգեցիկ
Հողին վըրայ . և ով նըստէր կաթ սրսկելու
Եւ կամ վիշտերն պատմելու քաղցր բարեկամին ,
Շուրջը ըզզար բուրում մ'անուշ , նըման սիւքին
Երանաւէտ ելիսինին : Ուղորմելի
Մոլեգնութիւն , որ կոյսերուն բըրիտանեան
Պաշտել կուտայ բուրաստաններն արուարձանեայ
Զորս կորուսեալ մօր կարօտն հոն կ'առաջնորդէ :

(Շարունակելի)

1. Այժմ մի օրէնք նոր. 12 Յունիսի (1804) և 5 Սեպտեմբերի (1806) հրովարտուե-
ները որ Գողգոթայ տէրութեան համար պատրաստուեցան և ըստ այնմ Իտալիոյ Գաւառ-
ներուն համար որ անոր կը հպատակէին. այս հրովարտականքով կը հրամայուէր հասարա-
կութիւն և հաւատարմութիւն թաղումի ամէն քաղաքացիներուն անխորթէն, առանց նկա-
տի առնելու ոչ ընկերական դատակարգը և ոչ անհատական արդիւնքները : 2. Թալիս.
Մուսայի մը անունն է : 3. Յայկին ձակ աղիւսիկ. այսինքն աղքատ կեանքին մէջ, այս
Մուսայի Գահանան և այս աղքատը Փաթիւնն է : Իտալացի հռչակաւոր բանաստեղծ : 4.
Սարսանաքաղն. կնամարդի հեշտութեան տիպար. տիկայ ասորի թողաւոր մէր : 5. Ապ-
սուանիայ ֆաւայրներն. ծամածուռ անձանք էին : 6. Անպրոգեսայ. Դից մօտենալու նշանն
է : 7. Ռալիկ բուսի. Միլանի արուարձանեայ գերեզմաններն ուր կուտակուած էին ում-
բող մեռածներու ոսկորները առանց զանազանութեան : 8. Քաղաք. Միլանը : 9. Այն օրէն
որ հատանիսներն կը յիշեցնէ ժան ժադ Բուսայի վարդապետութիւնը, որ կ'ըսէր թէ ժա-
մանակ մը մարդերը (մարգ-գազանները) ընկերական դաշինքով մը քաղաքականութեան
սկսած են, և այս դաշինքով է որ հաստատուեցան հարսանիքները, զատարանները և
կրօնքը. այս վարդապետութիւնը արդէն եկեղեցիէն հերքուած է : 10. Ոչ ֆալսիսներն պա-
կեացան կնախփներին. վաղեմի ժամանակներու մէջ սովորութիւն կար գծելու հատարակա-
կան ճամբաներու մէջ ուրուականներ կամ ուրիշ պատկերներ, կենդանի պահելու համար
հաւատացեալներու մօքին մէջ մահուան մտածումը : 11. Բանգի մեռած ասէն մարդուն
աչերն փնտնէն յոյս արեգակն. այս խորհրդածութիւնը ենկականին չորրորդ գիրքէն առ-
նուած է :

... « Oculisque errantibus alto

Quaesivit Coelo lucem, ingemuitque reperta. »

Աստանդական աչերով բարձր երկնքէն լոյս խնդրեց և հառաչեց գտնելով զայն.

Կէօթէն մեռած ատեն նոյն բանը կրկնեց. « Զգեցեք որ անգամ մ'ալ այս փախչող
արեւն տեսնեմ : » նոյն խօսքերը կը գտնուին նաև Նիկիթի և Սոֆոքլեսի դրամաներուն մէջ :

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ

Ժամանակէն կ'արտատպենք .

ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԲՈՂՈՔ-ԹԱԳՐԻՐԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶՄԱՆՅ ԱՆՏԵՍՈՒԵԼՈՒՆ ԱՌԹԻԻ

Յունաց Պատրիարքանը հետեւեալ բազմիւր մասոց Դասական նախաբանութեան, նոյնիմաստ բազմիւրնք պիտի մատուցուին նաեւ միւս Պատրիարքաներու կողմէ:

«Վսեմաւուր Տէր,

«Լուծեալ Երեսի . Ժողովին կողմէ պատրաստուած նահանգային օրէնքին 85րդ յօդուածէն մինչեւ 162րդ յօդուածը հրատարակուած լլաւով իբր պետական օրէնք պիտի գործադրուի: Յունաց Պատրիարքայանը կը խորհի թէ այս առթիւ անհրաժեշտ է ստիպողաբար կառավարութեան ներկայացնել հետեւեալ կէտերը .

«Յայտնի են այն պատմական դէպքերը, որոնց հետեւանօք Բ. Դուռը Պատրիարքարաններուն ու տէրութեանց հաղորդեց թէ պիտի գործադրէր արդէն անցեալ դարուն և մանաւանդ 1852 (1272) թարձր Ֆէրմանին մէջ ծանուցեալ բարենորոգումները:

«Այս բարենորոգումներուն պատմութիւնն ու ոպին ցոյց կուտան պայծառօրէն թէ պաշտօնապէս ու միջազգային կերպով հաստատուած է որ Օսմ. Պետութիւնն իսլամ լլաւով, ո՛չ Պետութիւնը, ո՛չ ալ այնտեղ գտնուող քրիստոնեայ ազգութիւնները կրնան բարգաւաճիլ, եթէ մէկ կողմէ բացարձակապէս չյարգուին: Պատրիարքարաններուն այն իրաւունքներն ու առանձնաշնորհումները, որ կը պահպանեն քրիստոնեայ ազգութեանց հիմնական տարրերը, և միւս կողմէ, եթէ չընծայուին ինչ ինչ երաշխիքներ՝ տպահովող որ հանդէպ իսլամներուն և իբր Օսմանեան քաղաքացի նկատուած քրիստոնեաներուն Պետութեան վերաբերումը պիտի լլայ անկողմնակալ: Այս կէտերէն առաջինին համար ազգային կանոնադիրներ պատրաստուեցան ու շրջաբերականներ հրատարակուեցան, հնուց ի վեր գոյութիւն ունեցող առանձնաշնորհեալ իրաց վիճակը պաշտպանող: Դալով մանաւանդ Քրիստոնէից հանդէպ անկողմնակալութեան, հրատարակուեցան հետեւեալ որոշումները .

«Կազմութիւն խառն դատարաններու, իսլամներէ և քրիստոնեաներէ բաղկացեալ:

«Կազմութիւն Եպարքոսին նախագահութեան ներքեւ Բարձր Խոր-

հուրդի մը (Մեհլիսի Պաշխա), որուն պիտի կրնան մասնակցիլ հասարակութեանց պետերը, խորհրդակցելու համար պետական հպատակներուն պատկանող իրաց վրայ (Ֆէրման 1856թ) :

«Կազմութիւն ապա ի Պոլիս, դատական մեծ Խորհուրդի մը, որուն մէջ հաւասար թիւով աթու պիտի ունենան Իսլամներ և Քրիստոնեաներ : (Յիշատակագիր Բ. Դրան, 1867թ) :

«Ընդհ. Ժողովներ զաւանդելու մէջ, կէս առ կէս բազկացած իսլամներէ ու քրիստոնեաներէ :

«Վարչական Խորհուրդներ (Խտարէ Մէճլիսի), որոնց ներկայ պիտի ըլլան հոգեւոր պետերն ու հաւասար մասով իրենց կրօնակիցներուն կողմէ ընտրուած քրիստոնեաներ ու իսլամներ : Նոյնպէս մասնակցութիւն հաւասար մասով՝ իսլամներու և ոչ-իսլամներու, անկախաբար բնակչութեան թուական համեմատութիւնէն, դատական ու վարչական զանազան Խորհուրդներու և յանձնաժողովներու :

«Այս օրէնքներուն պարունակութենէն և պաշտօնաթղթերու որոշ բնագիրէն ու ոգիէն բացայայտ կը տեսնուի թէ Պետութեան իշխանութիւնը Իսլամ ըլլալով՝ քանի որ անոր պէտք իսլամն է, նոյն ինքն Բ. Դուռը այնպէս նկատած է ընդհանրապէս և ի մասնաւորի այս պարագային, այսինքն վարչային գործերու մէջ միակ երաշխաւորութիւնն է՝ քային, այսինքն վարչային գործերու մէջ միակ երաշխաւորութիւնն է՝ իբր քաղաքացի և ոչ թէ բացայայտօրէն իսլամ ոգիով, անկողմնակալութեան, գործադրութեան վարչային գործերով զբաղող Խորհուրդներու մէջ մասնակցութիւնը հոգեւոր պետերուն, իբր ներկայացուցիչ Քրիստոնեայ ազգութեանց և քրիստոնեայ անդամներու, ընտրուած՝ հաւասար թիւով՝ ընտրեալ Իսլամ անդամներուն : Այս երաշխաւորութիւնը, ի նկատ առնելով վաւերացում չըլլալը և ի նկատ առնելով նաեւ հրատարակուած իրերուն մէկ մասին անգործադրելի մնացած ըլլալը, հաւասար փրկարար արդիւնքներ Պետութեան և այն ազգութեանց համար, զորոք ի նկատ առած էր, մինչ կրնար տալ : Այսուհանդերձ մինչև հիմա հոգեւոր պետերու և ընտրուած անդամներու ներկայութեամբ գործող Իսլամը Մէճլիսիները Քրիստոնէից համար կը կազմեն տեսակ մը միտմարութիւն և կը պահպանեն անոնց ամենավճիռ իրաւունքները այլեւայլ փոքր գործերու մէջ :

«Հետեւաբար Յունաց Պատրիարքարանը մտահոգութեամբ տեսաւ հրատարակեալ օրէնքին և այն օրինագիծին մէջ, որմէ քաղուած էր հրատարակեալ մասը, նոյն իսկ ջնջումն ամենանուազօյն սահմանին այն երաշխաւորութեան՝ որ պաշտօնապէս ճանչցուած էր իբր կարգադրութեան եզանակ Քրիստոնէից գոյութեան համար՝ իբր քաղաքացի այս պետութեան :

«Պատրիարքարանը զարմանքով տեսաւ անոր յարակից բացատրական տեղեկագրին մէջ ուր ջնջումը բացատրուած է հետեւեալ կերպով :

թէ պատուային վարչութեան հակադէմն համար կը բաւէ Երեսփ. Ժողովին հակադէմն, ի մասին ընդհանուր գործունէութեան, և թէ հանգային Ընդհանուր Խորհուրդը, որ պիտի հաստատուի՝ կը բաւէ անդական գործունէութեան համար: Այս զարմանքը յառաջ կուգայ այն իրողութենէն որ օրէնքն այս կերպով կը ժողովին թէ խնդիրը կը պաշտօնայ իսլամներու և Քրիստոնէից միջեւ վարչութեան անկողնակալութիւնը հակակշռելու և երաշխաւորելու չորսը, և թէ այս կերպով չէ որ օրէնքը կ'ապահովէ այս երաշխաւորութիւնը, զի գործադիր իշխանութիւնը նոյն իսկ Սահմանադրութեան հոչակումէն ետքը կը շարունակէ ըլլալ, իսլամ, Խալիֆան ըլլալով միշտ գերագոյն միտք, և Շէրին՝ Պետութեան հիմնական օրէնքը: Երեսփ. Ժողովն և հանգային բոլոր Ընդհ. Խորհուրդներն որ պիտի կազմուին ընտրական նոյն եղանակաւ, բաղկացած են իսլամ մեծամասնութեան մը զոր իսլամ գործադիր իշխանութիւնն ուղղման չափ ուժովցնելու ամէն միջոց ունի: Ընդհակառակն, Երեսփ. Ժողովին ու հանգային Խորհուրդներուն յանձնուելով Քրիստոնէից պէտք եղած երաշխաւորութիւնը, խնդիրը վերջ ի վերջոյ կը յանգի ազնայայտի օրինադրելու վարչութեան գործունէութիւնը թուրքերիսլամ ոգիով:

«Պատրիարքարանը չուզեր հաստատել թէ կը հետապնդուի այնպիսի բան մը, զոր պատմական տուեքները և նոյն իսկ իրաց բնոյթը ապացուցած են իբր անիրադրանքի և լոկ պետութեան տկարութիւնը պատրաստելու բնոյթ ունեցող:

«Ասոր համար է որ Պատրիարքարանը թախանձագին կը խնդրէ կառավարութենէն պահել Իստիք Մէճլիսներու և գաւառային ո' և է Խորհուրդի մէջ ազգութեանց հանգէպ անկողնակալութիւնը երաշխաւորող օրէնքը, պահելով այդ ժողովներուն մէջ հոգեւոր պետերու և Իսլամ անդամներու հաւասար թիւով ընտրուած քրիստոնեայ անդամներու ակնարկը, քրիստոնեայ ազգութեանց մէջ ընտրութիւնները կատարուելով՝ համեմատաբար քրիստոնեայ իւրաքանչիւր թիւին:

«Միւս կողմէ, ի նկատ առնելով Սահմանադրութեան հոչակումին յաջորդող չորս տարիներուն մէջ ձեռք բերուած փորձառութիւնը, Պատրիարքարանը պարտք կը համարի յիշեցնել կառավարութեան ու խնդրել անկէ որ միջոց մը գտնուի ապահովելու իրաւունքները այս Իսլամ պետութեան Քրիստոնեայ քաղաքացիներուն, որ փոքրամասնութիւն են ընդհանուր ժողովուրդին համեմատաբար, կատարելագործելով խնդրոյ առարկայ օրէնքը և գալիս ընծայելով սղգու՝ Պոլսոյ մէջ հիմնելով խառն Բարձրագոյն Խորհուրդ մը, նման անոր զոր սահմանած են 1867ի բարձր Ֆէրմանն ու Յիշատակագիրը, կազմուած հաւասար մասով Իսլամներէ ու Քրիստոնեաներէ: Այս ժողովը ի գործ պիտի դնէ ընդհ. հակակշիռ, պաշտօնականներու կողմէ անկողնակալութեան նկատմամբ եղած օրինաւ:

զանցութիւններուն վրայ : Սամանադրութեան հաւասարութիւնն ու արդարութիւնը պարտք կը գնեն ըստ այս Պետութեան կազմութեանը , ի չա՛ն այս պետութեան՝ այս կերպով կատարելագործել օրէնքը :

«Բացի այս ըսուածներէն , հրատարակեալ օրէնքին մէջ խնդիր կ'ըլլայ կրթական հարցն ու անոր յարակից միջոցները , իսկ չհրատարակուած օրինագիծերու յօդուածներու մէջ համայնքային խորհուրդներու խնդիր կայ :

«Վերոյիշեալ կէտերը սերտ յարաբերութիւն ունենալով առանձնաշնորհեալ իրաց վիճակին հետ , Պատրիարքարանը կը խնդրէ Կառավարութենէն զինքը ժամանակին ու որոշապէս վստահացնել թէ այս օրէնքով չպիտի դպչուի Յոյն Պատրիարքարանին ու Ազգին իրաւունքներուն ու առանձնաշնորհութեան : Երեսփ . յանձնաժողովին օրինագիծը խօսք կ'ընէ թէ կառավարութիւնը պարտաւոր է մասնաւոր օրէնք մը առաջարկել համայնքներու և գիւղերու վարչութեան համար , բայց կառավարութեան կողմէ Երեսփ . ժողովին ներկայացուած յարակից օրինագիծէն ի յայտ կուգայ ձգտում մը թէ խառն գիւղերու մէջ վարչային ժողովները ըլլան խառն ու բաղկացած քրիստոնեաներէ և իսլամներէ , միասին ընտրուած :

«Պատրիարքարանը այժմէն իսկ կը խնդրէ որ այսպիսի բան մը տեղի չունենայ :

«Գիւղերուն մէջ , ուր կրօնական համոզումներն ու սովորոյթները մեծ ազդեցութիւն կը գործեն և ուր խիստ անձուկ է չըջանակը , Վարչային խորհուրդը յաճախ կը միջամտէ նոյն իսկ ընտանեկան կեանքի ամենափոքր մանրամասնութիւններուն : Եւ բոլորովին հակառակ է կարծել թէ քրիստոնեայք ու իսլամք պատշաճ պիտի գտնեն այսպիսի խորհուրդ մը :

«Միակ բանը որ պիտի պատահի , սա պիտի ըլլայ թէ քրիստոնեայ գիւղերուն համար բռնապետութիւն մը պիտի դառնայ այսպիսի խորհուրդ մը , քանի որ իսլամներուն յատուկ տիրապետութեան ոգին պիտի գերակշռէ ու գործադիր իշխանութիւնն ալ անոր պիտի օգնէ , որով ետ պիտի դառնանք դէպի այն ժամանակները , ուր քրիստոնեաներն առարկայ էին քմահաճ տրամադրութիւններու :

«Պատրիարքարանը ներկայացնելով այս բոլորը , ըստ վերոյիշեալ սկզբունքներուն , կ'սպասէ փոփոխումը օրէնքներուն և անոնց յարակից օրինագիծերուն : »

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԼՁԱԿԱՅԻՆԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Մարտինոս Նոր վիճակաւոր , Արհի . Իգնատիոս Արք . Մողոյեան փառաւոր կերպով ընդունուել է իր աթոռանիստ քաղաքին մէջ : Մեր Թղթակիցէն հասած նամակին լուրերը շատ միօրթարական են : Արդէն ուրիշ բանի չէինք սկնկալել : Ամենայն մասամբ տրժուհաւոր Առաջնորդ մը , որ միշտ սիրուած է իր ժողովրդէնէն , և որ՝ Ս . Եկեղեցւոյ Գերա-

գոյն Դիլայն տրամադրութեամբ նոյն վիճակին Հովիւ կարգուեցաւ, բնականաբար պիտի արժանանայ ընդհանուր գնահատութեան և խանդավառութեան: Ամբողջ քաղաքը մասնակից եղած է Հայ Կաթողիկէ հասարակութեան ցնծալից հանդէսին, որուն նմանը չեն յիշեր Մարտինոս մէջ: Արհի. Արքեպս.ին ժամանումի օրը քաղաքէն չորս ժամ հեռաւորութեամբ ընդ առաջ ելած էին Հայ Կաթողիկէ քահանայք, իշխանք և մեծամեծք, Տէրութեան գլխաւոր պաշտօնեաներ, հեծեալ ոստիկան զինուորներ, Լատին, Ասորի, Բաղդէացի և հին Ասորի առաջնորդներ, մօտաւորապէս 200 միաւորներ: Իսկ երբ այս թափօրը մօտեցաւ քաղաքին, ահա ամբողջ քաղաքը գրեթէ դուրս խուժած էր ընդ առաջ Մեծարայ Դիտապետին, զոր ուրախութեան արտասովոր դուիններով ու ծափերով առաջնորդեցին մինչեւ Մայր-եկեղեցի: Օրերով տեւեցին այցելութիւններն ու փոխանակութիւնները: Արհի. Արքեպիսկոպոսին սիրտը յերաւի շատ մխիթարուած է այս որդիական անկեղծ սիրոյ փայլուն արտայայտութիւններէն. մօտաւանդ տեսնելով որ իր բարի ժողովուրդը, որ տարիներով անաղարտ պահպաններ է Կաթողիկէ Ս. Կրօնքը, ամէն զոհողութիւններով՝ ցհեզումն իսկ արեան, հիմա եւս անյողդողդ և հաստատուն կեցած է միեւնոյն սկզբանց վրայ, որոնց՝ վերջին դարուց մէջ, նախախաղիք և նոյն իսկ որսան եղած ըլլալու պատիւն ունի Մարտինոս:

Ի սրտէ կը մաղթենք անխնայ յարատեւութիւն այս ճշմարիտ հաւատացեալ ժողովրդեան, և երջանկութիւն ու բարօրութիւն նորընտիր արժանաւոր Հովութիւն:

* Կեսարիայէ Պոլիս հասած է վերջերս Գեր. Մեսրոպ Վ. Քէշիշեան, Միաբան Զրմառու: Քանի մը տարիէ ի վեր եռանդուն փութաշնորհութեամբ և գովելի ընթացքով կը պաշտօնավարէ ի Կեսարիա, Եպիսկոպոսի փոխանորդութեան պաշտօնով: Արհի. Անտօն Եպս. Պահապանեան զրկած է զինքն հոս, իր թեմին քանի մը գործոց հարգադրութեան համար:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Հայաստանի Բարեկարգիչ Յանձնաժողովը.— Սքամպուլ կ'իմանայ թէ նախարարաց Խորհուրդը իր վերջին նիստին մէջ որոշեց փութացնել Հայաստանի բարեկարգիչ յանձնաժողովին առաքումը: Այս նպատակաւ որոշուեցաւ քէզլէրէ մը ուղղել Երեսփ. Ժողովին, կարելի եղածին չափ շուտով վաւերացնելու համար բարենորոգումներու գործադրութեան տեսակէտով անհրաժեշտ 100,000 ոսկի վարկը: Այս քէզլէրէն Շք. օր զրկուած պիտի ըլլար:

* Էջմիածնայ Կաթողիկոսին ուղեւորութիւնը.— Վաղարշապատէն Մայիս 20 թիւով կը գրուի Մեակի. «Այսօր ամենահաստատ տեղից իմացանք, որ Վեհափառ Կաթողիկոսը ստացեր է փոխարքայից հետեւեալ հեռագիրը.

Մայիսի 11ին Թագաւոր Կայսրը, բարեհաճեց նշանակել Զերդ Սրբութեան Բարձրագոյն ընդունելութիւնը Յարսիօյէ Սէլայում Յունիսի սկիզբին: Սրա մասին ծանուցանում եմ ի լրումն Մայիսի 9ի հեռագրի: Ամսիս 23ին Վեհափառը դուրս է գալու, տեղիցս դէպի Պետերբուրգ. Վեհափառի թէ շքախումբը և թէ ուղեկարգը մնալու նոյնը և անփոփոխ: Հաւանական է, որ Վեհափառի օժտմը տեղի ունենայ Յուլիսին ինչ վարդապետի տօնի օրը:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Օսմանեան զօրքերը Ափրիկեան Տրիպոլիսի Համսի մէջ փայլուն յաղթանակ մը ձեռք բերած են թշնամւոյն դէմ:

Պատերազմի տուրք.— Թաւիսն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ այն լուրերուն մասին թէ պատերազմի ծախքերուն համար տուրքերու վրայ յաւելումներ պիտի ըլլան: Ա. Պատերազմի տուրքը որոշ ժամանակի մը համար և առժամեայ պիտի ըլլայ: Բ. Պատերազմի տուրքը եղած զինուորական ծախքերուն տարեկան քանակին համեմատութեամբ պիտի գանձուի: Գ. Տուրքերու յաւելումը ստպէս պիտի ըլլայ.

1. Կապուածական տուրքերու վրայ հարիւրին 25 պիտի աւելցուի:
2. Թէմէզդուի:

տուրքն ալ հարկերն 25 յաւելում պիտի կրէ: 3. Թէմէդդիւն պետական պաշտօնեաներն ալ ենթակոյ պիտի ըլլան և տարեկան հարկերն երեք համեմատութեամբ տուրք պիտի վճարեն: 4. Զինուորական ծառայութեան փոխարէն հիմա հատուցուած (պէտէլ) 50 օսկին 60ի պատի բարձրանայ և իէտիֆներուն ալ 30էն 40ի: 5. Ասոնցմէ զատ դեռ քանի մը առարկաներու տուրքերն ալ թիթեւ յաւելումներ պիտի կրեն:

* Պատեհազմական ասեանք դատեց յունարէն թաւ և Նէա Անաթոլի թերթերուն մէջ մաքերը յուզող հրատարակութիւն ըրած ըլլայնուն համար և համագում գոյացնելով որ չարակամութիւն չկայ անպարտ արձակեց զանոնք:

* «Կաւկաս» շոգեմալին միջադէպը կարգադրուած.— Իզմիրի թրքական սմբոցներէն արձակուած ազգայնոր առմբերէն քնասուած ֆրանսական կաւկաս շոգեմալին խնդիրը կարգադրուեցաւ, ֆրանսական կառավարութիւնը լիակատար գոհացում ստացած ըլլալուն:

Պոլսոյ ֆրանսական դեսպանը երկուշաբթի օրը արտաքին գործոց նախարարին այցելելով ստացաւ այս միջադէպին մասին օմ. կառավարութեան տուած որոշումը: Դեսպանական պահականաւոր, որ Իզմիր գացած էր քննութեան համար, երկուշաբթի օր Իզմիրէ ծամբայ ելաւ Պոլիս գալու համար:

* Օմ. երեսփոխաններու յամախակի և տառնց բանաւոր պատճառի բացակասութեան առաջը առնելու համար որոշուեց է ժողովին իրիկունները վճարել թոշակին նոյն օրուն բաժինը, ինչպէս սովորութիւն է ուրիշ երկիրներու մէջ:

* Հռոմէ եկած հրահանգներու վրայ, առջի օրունէ սկսեալ կը փակուին իտալական բարեգործական հաստատութիւնները: Կը հաւաստուի թէ որոնցք արդէն իսկ փակուած է: Վարիչ քոյրերը և որբուհիները Նաբոլի պիտի դրկուին: Իտալական հիւանդանոցն ալ պիտի փակուի և բժիշկները որոնք արտօնուած էին Պոլիս մնալու, իտալիա պիտի երթան: Լէվանդ Հեւալս վերապահութեամբ կը հաղորդէ այս լուրերը:

* «Էֆօ քը Բարի»ի վախը.— Ֆրանսական թերթերը կ'ըսեն թէ. «Եթէ տերուս թիւնք չմիջամտեն, ամբողջ Արքիպեզագոս իտալացիներու տիրապետութեան ներքեւ պիտի լինայ: Սերպայի համար ստիպողական է վերջ տալ պատերազմին (Օմ. Գործակալութիւն)»

* Իրէքէ կը հաղորդուի Բուսէլի թէ այլանայի ըմբոսները այս անգամ նոր պահանջաւոր մը ներկայացուցած են օմ. կառավարութեան, որ հետեւեալ ութը առաջարկներէն կը բաղկանայ.

1. Համայններու շինութիւն: 2. Վարժարաններու կառուցում: 3. Սահմաններու ամրացում: 4. Ընդհանուր Գոսովայի ժողովուրդը զինել: 5. Գիւղերու ժողովուրդին Բուսէլի մէջ զինուորութիւն ընել տալ և ասորիքի արքայութեան պայմանաւորման երկարել: 6. Աղանաւի տուրքը թեթեւցնել: 7. Իրէքի կառավարիչը և նախկին, ինչպէս նաեւ սրբիկուն զինուորներու հրամանատարը փոխել:

* Մամուլի Օրէնք.— Խորհրդարանական յանձնաժողովն ընդունեց որ լրագրի արտօնութեան համար պահանջուած 500 օսկին 250ի զեղչուի և այդ գումարը ֆոնուն գրամով յանձնելու պարտաւորութիւնն ալ վերցուելով հատատուն երաշխաւորութիւն տուաւ: Պատասխանատու Տնօրէններու մասին պահանջուած պայմաններն ալ թեթեւցած են:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ	303
Ս. Քահանայապետի նամակի բնագիրը	309
Ս. Քահան. նամակին քրքերէն քրքով	310
Գրեթմ Եճճեր	312
Յունաց Պատրիարքին րազդիրը	315
Տեղեկագրականք	318

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուստուրիս հասցէսի Նօ. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան
 պաշտօնական Շաբաթօրէ՛ն փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
 սկսի հրատարակուի՛ն . 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
 նոյն բովանդակութեամբ յով նաեւ տեղեկութեանց բաժին
 մը, որ կը ստուգուի ամէն յուրերն՝ համառօս-
 օրուած . որով անմիջապէս կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
 մասնաւորօրէն անմասնակ չունին օրաթերք կարդալու :

ԱՍՏՈՒՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դնեկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արշաւանդի

Տարեկան Դրամ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւն կանխիկ կը վճարուի Մանսա-Բոսնոյ եւ
 կամ մէյ մէկ յընց նամակադրութիւնով :

Մէկ թիւ 1 Դանեկան

—*—

Նամակ , յօդուած , եւ կը դրկուին խմբագրութեան հասցէին .
 ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ
 Պատրիարքարան Կ. Պոլիս
 Բերա՛ն

Arzakank
 cat Catholique
 Constantinople

- ԾԱՆՈԹ .— 1.— Արձագրութիւն րաւորի շաբաթ օրերը:
 2.— Խմբագրութեան հրատարակութեան տարեկան չէ անպատճառ կամ նոյնութեամբ
 հրատարակուած ու եւ է յօդուած:
 3.— Չեղադրութեան աս չեն դարձուիր:
 4.— Յօդուածներ ձեռագիրներ պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ
 կողմը միայն:
 5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կրկանաւորուի: